Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված՝ Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության զեկույցի (2019թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 1
2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 2
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ 4
4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ 7

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության հզոր ինդուստրիա է, որը վերջին տարիների աճման արագընթաց միտումների շնորհիվ հարյուրամյակի ֆենոմեն է համարվում: Նրա արագընթաց աճին ու զարգացմանը նպաստում են պետությունների ու ազգերի միջև քաղաքական, տնտեսական, գիտական և մշակութային կապերի ամրապնդումն ու ընդլայնումը: Դրանով պայմանավորված՝ զբոսաշրջությունը վերածվում է ազգային և համաշխարհային տնտեսության ճյուղերի առաջատար ոլորտներից մեկը: Այս ամենից ելնելով՝ զբոսաշրջության ոլորտին վերաբերող խնդիրները և մարտահրավերները դուրս են գալիս առանձին երկրների ազգային սահմաններից՝ ունենալով համաշխարհային բնույթ: Գլոբալ և ազգային մակարդակներում զբոսաշրջության ոլորտում առկա հիմնախնդիրները, ներկա և ապագա մարտահրավերները, զարգացման հեռանկարները քննարկելիս հատկանշական է Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) կողմից ոլորտին նվիրված՝ հրապարակվող զեկույցի դերը:

Նշված զեկույցը սկսեց հրապարակվել 2007 թվականից՝ Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության (ՃԶՄ) զեկույց անվանումով[1]: Զեկույցը հնարավորություն է տալիս հասկանալու և կանխատեսելու գլոբալ ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտում զարգացման միտումներն ու տենդենցները, խնդիրներն ու ռիսկերը: Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացումների խթանող քաղաքականություն մշակելու նպատակով, զեկույցի հիմքում ձևավորվող ցուցիչը՝ Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության (ՃԶՄ) ինդեքսը, ծառայում է որպես ռազմավարական հենանիշային գործիք առանձին դիտարկվող երկրների համար: ՃԶՄ ինդեքսը դիտարկվող երկրների կառավարությունների և այդ երկրների ներսում գործող ընկերությունների համար ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի զարգացման հետագա ռազմավարության մշակման միջոց է հանդիսանում: Զեկույցը հնարավորություն է տալիս երկրներին հասկանալու այս ոլորտում իրենց ունեցած առավելություններն ու թերությունները, ոլորտի զարգացման և մրցունակության բարձրացմանն ուղղված սեփական յուրահատկությունները:

[1] Համաշխարհային տնտեսական համաժողովը ՃԶՄ զեկույցը 2007-2009թթ. համար հրապարակել է ամենամյա կտրվածքով, իսկ արդեն 2009-ից ՃԶՄ զեկույցը սկսեց հրապարակվել երկու տարին մեկ անգամ:

Ճանապարհորդության և մրցունակության զեկույցը 2019-ին հրապարակվել է 140 երկրների համար: Հարկ է նաև նշել մի փաստ. 2019-ին ՃՋՄ զեկույցում, ի տարբերություն նախորդ տարիներին հրապարակված զեկույցների, բոլոր հասանելի ցուցանիշները (ինդեքս/ենթաինդեքս/հենասյուն) ներկայացված են տասնորդական թվերով՝ նախկին հարյուրերորդականի փոխարեն:

2019 թվականին, ինչպես և նախորդ՝ 2017-ի հրապարակման արդյունքներով, ՃՋՄ ինդեքսով առաջատար երկիրը Իսպանիան է՝ 5.4 միավորով, իսկ ինդեքսի հիման վրա կազմված վարկանիշային աղյուսակը եզրափակում է Եմենը՝ 2.4 միավորով (նախորդ՝ 2017-ի հրապարակման արդյունքներով վարկանիշային աղյուսակը եզրափակել է նորից Եմենը՝ 2.44 միավորով): Ըստ 2019-ի տվյալների՝ ՀՀ-ն զբաղեցրել է 79-րդ հորիզոնականը՝ 3.7 միավորով: Այսպիսի ցուցանիշով Հայաստանը հարևան երկրներից գերազանցում է միայն Իրանին, որը 89-րդն է՝ 3.5 միավորով: ՃՋՄ ինդեքսի համաշխարհային միջին ցուցանիշը 2019-ին կազմել է 3.8 միավոր, ինչը ենթադրում է, որ ՀՀ-ն չի գերազանցել համաշխարհային միջին ցուցանիշի շեմը:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՃՋՄ ինդեքսը ունի բաղադրյալ, քառաստիճան կառուցվածք: Այն կազմված է ենթաինդեքսներից՝ թվով 4, որոնք իրենց հերթին կազմված են հենասյուներից՝ թվով 14, իսկ վերջիններս ստացվում են ցուցիչներից՝ թվով 90, որոնք բաշխված են հենասյուների մեջ: Ինդեքսի, ենթաինդեքսների, հենասյուների և ցուցիչների համար հաշվարկվում են առանձին գնահատականներ՝ 1-7 միջակայքում, որտեղ յոթը լավագույնն է, իսկ մեկը՝ վատագույնը[2]: Հաշվարկված գնահատականների ճիշտ ագրեգացման, այնուհետև միջինացման արդյունքում ստացվում է վերջնական ՃՋՄ ինդեքսը: ՃՋՄ ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած են՝ «Արդյունավետ միջավայրի ստեղծում», «Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականություններ և նպաստավոր պայմաններ», «Ենթակառուցվածքներ», «Բնական և մշակութային ռեսուրսներ» ենթաինդեքսները[3]: Աղյուսակ 1-ում ներկայացվում են ՃՋՄ ինդեքսի չորս ենթաինդեքսները, դրանց հենասյուները՝ իրենց մեկնաբանություններով:

---

[2] Հարկ է նշել, որ հենասյուների բաղադրիչներից՝ ցուցիչներից մի քանիսի գնահատումն իրականացվում է 1-100 միջակայքում:

[3] The Travel & Tourism Competitiveness Report 2019, World Economic Forum, 04.09.2019, https://www.weforum.org/reports/the-travel-tourism-competitiveness-report-2019 (այցելել է 29.01.2020թ.)

Աղյուսակ 1. ՃԶՄ ինդեքսի հաշվարկման ենթաինդեքսները, հենասյուները և դրանց մեկնաբանություններ

Ենթաինդեքս	Հենասյուն	Մեկնաբանություն
Արդյունավետ միջավայրի ստեղծում	1. Բիզնես միջավայր	Երկրի կողմից իրականացվող քաղաքականությունը բիզնես միջավայրի բարելավման համար
	2. Ապահովություն և անվտանգություն	Ընդհանուր հանցագործությունների, բռնության և ահաբեկչության մակարդակը
	3. Առողջություն և հիգիենա	Խմելու ջրի, սանիտարական նորմաների ապահովման մակարդակը, մարտահրավերների ընդունման առողջապահության ոլորտի պատրաստականությունը
	4. Մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա	Աշխատաշուկայի ճկունությունը, թափանցիկությունը, կրթական համակարգի մակարդակը
	5. Տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների առկայություն (ICT readiness)	Հագեցածությունը ժամանակակից տեխնոլոգիաներով, ինչպես նաև մատուցվող առցանց ծառայությունների որակը
Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականությունները և նպաստավոր պայմանները	6. Ճանապարհորդության և տուրիզմի ոլորտը որպես գերակա ոլորտ	Երկրի կառավարության կողմից տուրիզմի ոլորտի գերակայությանն ու ոլորտի մրցունակության բարձրացմանն ուղղված քաղաքականությունը
	7. Միջազգային շուկաների հանդեպ բացվածությունը	Տուրիստական ոլորտի միջազգայնացումը, շուկաների բացությունը և զբոսաշրջիկների համար երկիր մուտքի պարզությունը միջազգային մակարդակում
	8. Գնային մրցունակություն	Ավիատոմսի հարկերի, օդանավակայանների վճարների, հյուրանոցների հարաբերական արժեքների, ապրուստի միջին գների, ինչպես նաև դիզվառելիքի գների մակարդակը
	9. Շրջակա միջավայրի կայունություն	Կայուն և մաքուր բնական միջավայրի առկայությունը
Ենթակառուցվածքներ	10. Օդային տրանսպորտի ենթակառուցվածքներ	Երկիր մուտք գործելու դյուրինությունը, ինչպես նաև երկրի ներսում օդային ճանապարհով տեղաշարժվելու միջոցների առկայությունը
	11. Վերգետնյա և նավահանգստային համակարգերի ենթակառուցվածքներ	Ճանապարհային, երկաթուղային և նավահանգստային համակարգերի զարգացածության, հարմարավետության և արդյունավետության աստիճանը
	12. Տուրիզմի ծառայությունների համար նախատեսված ենթակառուցվածքներ	Որակյալ կացարանների, զվարճանքի օբյեկտների, հանգստավայրերի առակայությանը, ինչպես նաև զբոսաշրջիկներին անհրաժեշտ ծառայությունների հասանելիությանը
Բնական և մշակութային ռեսուրսներ	13. Բնական ռեսուրսներ	Երկրում առկա ՅՈՒՆԵՍԿՕ-ի բնական ժառանգության վայրերի քանակը, բնական միջավայրի որակը, կենդանական աշխարհի հարստությունը
	14. Բիզնես և մշակութային ռեսուրսների համար ճանապարհորդություններ	Երկրում առկա ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության վայրերի քանակը, մշակությանին, բիզնես և զվարճանքի համար թվային պահանջարկի նոր միջոցները

«Արդյունավետ միջավայրի ստեղծում» ենթաինդեքսը ներառում է երկրում ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի գործունեության համար անհրաժեշտ առաջնային պայմանները և կազմվում է 5 հենասյուների հիման վրա: «Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականություններ և նպաստավոր պայմաններ» ենթաինդեքսը նկարագրում է երկրի կառավարության կողմից ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի հետագա զարգացման համար որդեգրած քաղաքականությունը, դրա ռազմավարական կողմերը և իր մեջ ներառում է 4 հենասյուներ: «Ենթակառուցվածքներ» ենթաինդեքսը նկարագրում է յուրաքանչյուր տնտեսության ենթակառուցվածքների կարողությունները և որակը, այն կազմվում է 3 հենասյուների հիման վրա: «Բնական և մշակութային ռեսուրսներ» ենթաինդեքսը ինքնին ցույց է տալիս տվյալ երկրում ճանապարհորդելու պատճառները, այս ենթաինդեքսի հաշվարկման հիմք են հանդիսանում 2 հենասյուներ:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

ՀՀ ՃՋՄ ինդեքսը 2019-ին կազմել է 3.7, ինչի արդյունքում Հայաստանը դիտարկվող 140 երկրների շարքում զբաղեցնում է 79-րդ հորիզոնականը: Հրապարակման առաջին տարուց՝ 2007-ից մինչև 2019-ը ՃՋՄ ինդեքսով ՀՀ-ն իր լավագույն արդյունքը գրանցել է 2013-ին՝ 3.96 միավորով: Նշված ժամանակահատվածում իր լավագույն դիրքը ՀՀ-ն ունեցել է զեկույցի հրապարակման առաջին տարում՝ 2007-ին զբաղեցնելով 74-րդ հորիզոնականը՝ 3.93 միավորով:

Գծապատկեր 1. ՀՀ ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքսի զարգացումները (ՀՀ ՃՋՄ ինդեքսը՝ աջ առանցք)



Դիտարկելով ՀՀ ՃԶՄ ինդեքսով ստացած միավորները 2007-2019թթ. համար՝ հարկ է նշել, որ 2008թ. ՀՀ ՃԶՄ ինդեքսը նվազել է 2007-ի համեմատ, ինչի արդյունքում ՀՀ-ն զիջել է իր դիրքերը 15 հորիզոնականով: Արդեն 2009-2013թթ. ժամանակահատվածի բոլոր տարիներին նկատվել է ՀՀ ՃԶՄ ինդեքսով ստացած գնահատականի աճ: Չնայած այն հանգամանքին, որ 2009-ին 2008-ի համեմատ ՀՀ ՃԶՄ ինդեքսը աճել է, 2009-ին երկիրը զիջել է իր դիրքերը երկու հորիզոնականով: 2015-ին 2013-ի համեմատ ՃԶՄ ինդեքսը Հայաստանի համար նորից նվազել է, ինչի արդյունքում երկիրը զիջել է իր դիրքերը 10 հորիզոնականով: Արդեն 2017-ին նկատվել է ՀՀ ՃԶՄ ինդեքսով գնահատականի աճ 2015-ի համեմատ, իսկ 2019-ին գնահատականը աճել է 2017-ի համեմատ:

Աղյուսակ 2. ՀՀ զբոսաշրջության ոլորտի հիմնական ցուցանիշները

Ցուցանիշ	Տվյալ	
	2017	2019
ՀՀ ժամանած զբոսաշրջիկների թիվ, մարդ	1,191,910	1,494,800
ՀՀ-ում յուրաքանչյուր զբոսաշրջիկի կողմից ծախսված միջին գումարը	$785.1	$749.4
Ընդամենը զբոսաշրջիկներից ստացված գումար, մլն	$935.8	$1,120.2
Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի ՀՆԱ-ն, մլն	$383.1	$502.8
Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի կշիռը ՀՆԱ մեջ, %	3.8	3.9
Ոլորտում գրանցված աշխատողների թիվը, մարդ	40,158	36,900
Մասնաբաժինը ընդհանուր զբաղվածների մեջ, %	3.3	3.4

Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, որ 2019-ին 2017-ի համեմատ 25.4%-ով ավելացել է ՀՀ ժամանած զբոսաշրջիկների թիվը: Արդյունքում 19.7%-ով ավելացել է զբոսաշրջիկներից ստացված ընդհանուր գումարը: Վերջինս իր հերթին հանգեցրել է ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի ՀՆԱ-ի առաջանցիկ աճին, որը արտահայտվել է ՀՆԱ-ում այս ոլորտի տեսակարար կշռի ավելացմամբ՝ 0.1 տոկոսային կետով: Եթե սրան գումարենք նաև այս ոլորտում զբաղվածության նվազումը 8.1%-ով, ապա կարող ենք արձանագրել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում աճել է այս ոլորտի՝ մեկ աշխատողին բաժին ընկնող ավելացված արժեքը: Այս հանգամանքը վկայում է 2017-2019թթ. ՀՀ զբոսաշրջության ոլորտում արձանագրված դրական դինամիկայի մասին:

Ինչպես արդեն նշեցինք **ՀՀ ՃԶՄ ինդեքսը 2019-ին կազմել է 3.7, ինչի արդյունքում ՀՀ-ն 140 երկրների շարքում զբաղեցրել է 79-րդ հորիզոնականը: ՃԶՄ ինդեքսի այս գնահատականի վրա ամենամեծ դրական ազդեցությունն է ունեցել «Արդյունավետ միջավայրի ստեղծում» ենթաինդեքսը**, որով ՀՀ-ն ստացել է 5.3 միավոր և զբաղեցնում է 50-րդ հորիզոնականը (այս ենթաինդեքսով ՀՀ-ն զբաղեցրել է ամենաբարձր հորիզոնականը չորս ենթաինդեքսների շարքում): Նշված ենթաինդեքսի վրա առավել մեծ դրական ազդեցությունն ունի «Առողջություն և հիգիենա» հենասյունով ՀՀ գրանցած արդյունքը՝ 6.0 միավոր (այս ցուցանիշով ՀՀ-ն գրանցել է ամենաբարձր արդյունքը 14 հենասյուների շարքում): ՀՀ-ն «Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականություններ և նպաստավոր պայմաններ» ենթաինդեքսի «Գնային մրցունակություն» հենասյունով զբաղեցնում է 30-րդ հորիզոնականը, ինչը 14 հենասյուների շարքում Հայաստանի գրանցած ամենաբարձր դիրքն է:

Աղյուսակ 3. ՀՀ ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ենթաինդեքսները և հենասյուները

Ցուցանիշ	Գնահատական	Հորիզոնական
Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքս	**3.7**	**79**
Արդյունավետ միջավայրի ստեղծում	**5.3**	**50**
Բիզնես միջավայր	5.0	31
Ապահովություն և անվտանգություն	5.8	40
Առողջություն և հիգիենա	6.0	44
Մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա	4.8	52
Տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների առկայություն	4.7	68
Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականությունները և նպաստավոր պայմանները	**4.4**	**74**
Ճանապարհորդության և տուրիզմի ոլորտը որպես գերակա ոլորտ	4.7	74
Միջազգային շուկաների հանդեպ բացվածությունը	3.2	74
Գնային մրցունակություն	5.7	30
Շրջակա միջավայրի կայունություն	4.0	101
Ենթակառուցվածքներ	**3.2**	**81**
Օդային տրասպորտի ենթակառուցվածքներ	2.4	88
Վերգետնյա և նավահանգստային համակարգերի ենթակառուցվածքներ	2.8	91
Տուրիզմի ծառայությունների ենթակառուցվածքներ	4.3	62
Բնական և մշակութային ռեսուրսներ	**2.0**	**103**
Բնական ռեսուրսներ	2.5	95
Բիզնեսի և մշակութային ռեսուրսների համար ճանապարհորդություններ	1.4	91

Ենթաինդեքսների շարքում ՀՀ-ն վատագույն գնահատականը ստացել է «Բնական և մշակութային ռեսուրսներ» ենթաինդեքսով՝ 2.0 միավոր, ինչի արդյունքում այս ենթաինդեքսով երկիրը զբաղեցրել է 103-րդ հորիզոնականը: Իսկ արդեն **14 հենասյուների շարքում ՀՀ-ն վատագույն գնահատականը ստացել է այս նույն ենթաինդեքսի «Բիզնեսի և մշակութային ռեսուրսների համար ճանապարհորդություններ» հենասյունով**՝ 1.4 միավոր: **Նշված հենասյուների մեջ ամենացածր հորիզոնականը երկիրը ունի «Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականություններ և նպաստավոր պայմաններ» ենթաինդեքսի «Շրջակա միջավայրի կայունություն» հենասյունով**՝ 101-րդ հորիզոնականում:

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

2019 թվականին ՃԶՄ ինդեքսով 140 երկրների շարքում լավագույն ցուցանիշը գրանցել է Իսպանիան՝ 5.4 միավորով, չնայած այն հանգամանքին, որ չորս ենթաինդեքսներից և ոչ մեկում երկիրը առաջատար չի հանդիսանում[4]: Այսպես՝ Արդյունավետ միջավայրի ստեղծում ենթաինդեքսով երկիրը զբաղեցնում է 33-րդ հորիզոնականը՝ 5.5 միավորով, «Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականություններ և նպաստավոր պայմաններ» ենթաինդեքսով 10-րդն է՝ 4.9 միավորով, «Ենթակառուցվածքներ» ենթաինդեքսով 4-րդ հորիզոնականում է 5.6 միավորով, իսկ «Բնական և մշակութային ռեսուրսներ» ենթաինդեքսով եզրափակում է լավագույն եռյակը՝ 5.7 միավորով: Իսպանիայի այս ոլորտի մրցակցային ամենամեծ առավելությունը երկիր այցելածների բավականին մեծ քանակն է (այս ցուցանիշով երկիրը աշխարհում երկրորդն է), ինչը հնարավորություն է տալիս երկրին զարգացնել տնտեսություն, որը կենտրոնացվածություն ունի զբոսաշրջության ոլորտի վրա:

ՃԶՄ ինդեքսով 2019-ին վատագույն ցուցանիշը գրանցել է Եմենը՝ 2.4 միավորով 140 երկրների շարքում զբաղեցնելով վերջին հորիզոնականը: «Արդյունավետ միջավայրի ստեղծում» ենթաինդեքսով երկիրը զբաղեցնում է 137-րդ հորիզոնականը՝ 3.2 միավորով, «Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականություններ և նպաստավոր պայմաններ» ենթաինդեքսով վարկանիշային աղյուսակում նախավերջինն է՝ 3.2 միավորով, «Ենթակառուցվածքներ» ենթաինդեքսով բոլոր երկրների համեմատ ունի վատագույն

[4] Իսպանիան մրցակից երկրների համեմատ ցուցաբերել է կայուն և բարձր կատարողական բոլոր չորս ենթաինդեքսներով, ինչի արդյունքում ՃԶՄ ինդեքսով երկիրը զբաղեցնում է առաջին հորիզոնականը:

ցուցանիշը՝ 1.7 միավորով, իսկ «Բնական և մշակութային ռեսուրսներ» ենթաինդեքսով զբաղեցնում է 133-րդ հորիզոնականը՝ 1.6 միավորով:

Աղյուսակ 4. ՃԶՄ ինդեքսը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում (2019թ.)

Երկիր	Հորիզոնական		Ինդեքս
	Տարածաշրջանային	Համաշխարհային	
Խորվաթիա	1	27	4.5
Սլովենիա	2	36	4.3
Չեխիա	3	38	4.3
Ռուսաստան	4	39	4.3
Լեհաստան	5	42	4.2
Բուլղարիա	6	45	4.2
Էստոնիա	7	46	4.2
Հունգարիա	8	48	4.2
Լատվիա	9	53	4.0
Ռումինիա	10	56	4.0
Լիտվա	11	59	4.0
Սլովակիա	12	60	4.0
Մոնտենեգրո	13	67	3.9
Վրաստան	14	68	3.9
Ադրբեջան	15	71	3.8
Ուկրաինա	16	78	3.7
Հայաստան	17	79	3.7
Ղազախստան	18	80	3.7
Սերբիա	19	83	3.6
Ալբանիա	20	86	3.6
Մոլդովա	21	103	3.3
Տաջիկստան	22	104	3.3
Բոսնիա և Հերցեգովինա	23	105	3.3
Ղրղզստան	24	110	3.2

Աղյուսակ 4-ում Հայաստանը համեմատվում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ: Հայաստանը նշված տարածաշրջանների երկրների հետ համեմատելիս, ինչպես տեսնում ենք, ունի միջինից ցածր ցուցանիշ, ինչի արդյունքում դիտարկվող 24 երկրների շարքում զբաղեցնում է 17-րդ հորիզոնականը: 2019-ին տարածաշրջանային առաջատար երկիրը Խորվաթիան է, որը համաշխարհային վարկանիշային աղյուսակում գտնվում է 27-րդ հորիզոնականում՝ 4.5 միավորով: Դիտակվող երկրների շարքը եզրափակում է ԵԱՏՄ անդամ երկիր Ղրղզստանը:

2019-ին Հայաստանը ՃԶՄ ինդեքսով ԵԱՏՄ անդամ երկրներից գերազանցում է Ղազախստանին, որը 80-րդ հորիզոնականում է՝ 3.7 միավորով և Ղրղզստանին, որը 110-րդն է՝ 3.2 միավորով:

ԵԱՏՄ անդամ երկրներից Ռուսաստանի ՃԶՄ ինդեքսը 2019-ին կազմել է 4.3 միավոր, ինչի արդյունքում երկիրը զբաղեցնում է 39-րդ հորիզոնականը՝ առաջ անցնելով միության անդամ բոլոր երկրներին[5]: Ռուսաստանի Դաշնությունը Եվրասիայի ամենամրցակցային երկիրն է ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտում, ինչպես նաև ոլորտին բաժին հասնող ՀՆԱ-ի մեծությամբ տարածաշրջանում առաջատարն է: Ռուսաստանի այս ոլորտի մրցակցային առավելությունը ուժեղ օդային տրանսպորտի ենթակառուցվածքների առկայությունն է (այս հենասյունով երկիրը 23-րդն է): Ավելին, Ռուսաստանը Եվրասիական միակ տնտեսությունն է, որը համաշխարհային միջինից շատ ավելի բարձր ցուցանիշ է գրանցել «Բնական ռեսուրսներ» (34-րդ) և «Բիզնես և մշակութային ռեսուրսների համար ճանապարհորդություններ» (18-րդ) հենասյուներով:

Հարկ է նշել նաև մի կարևոր ցուցանիշ ևս. **ՃԶՄ ինդեքսով 2019-ին համաշխարհային միջին ցուցանիշը կազմում է 3.8 միավոր, Հայաստանը 140 երկրների շարքում գտնվելով 79-րդ հորիզոնականում՝ 3.7 միավորով, չի հաղթահարել համաշխարհային միջին ցուցանիշի շեմը:** Արդեն **Եվրոպայի և Ասիայի տարածաշրջանային միջին ցուցանիշը 2019-ին կազմել է 4.3 միավոր, այստեղ նույնպես Հայաստանը բավականին հետ է մնում դիտարկվող տարածաշրջանի միջին ցուցանիշից:** Հատկանշական է այն փաստը, որ նշված տարածաշրջանի մեջ են մտնում համաշխարհային լավագույն եռյակի երկրները՝ Իսպանիա, Ֆրանսիա և Գերմանիա:

[5] ՀՏՀ-ի քննարկվող զեկույցում ԵԱՏՄ անդամ երկրներից Բելառուսը չի դիտարկվել:

Հայաստանը 2019-ին ՃԶՄ ինդեքսով տարածաշրջանի հարևան երկրներից հետ է մնում Թուրքիայից, որը 43-րդն է՝ 4.2 միավորով, Վրաստանից, որը զբաղեցնում է 68-րդ հորիզոնականը՝ 3.9 միավորով և Ադրբեջանից, որը 71-րդ հորիզոնականում է՝ 3.8 միավորով: Հայաստանը 2019-ի ՃԶՄ վարկանիշային աղյուսակով ավելի բարենպաստ դիրքում է Իրանի նկատմամբ, երկիրը 89-րդն է՝ 3.5 միավորով:

Աղյուսակ 5. ՀՀ և հարևան երկրների ՃԶՄ ինդեքսի ցուցանիշների համեմատականը 2019թ.

Ցուցանիշ/երկիր		Հայաստան	Իրան	Թուրքիա	Ադրբեջան	Վրաստան
Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքս	Ինդեքս	3.7	3.5	4.2	3.8	3.9
	Հորիզոնական	79	89	43	71	68
Արդյունավետ միջավայրի ստեղծում	Ինդեքս	5.3	4.6	4.6	5.4	5.4
	Հորիզոնական	50	83	82	37	40
Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականությունները և նպաստավոր պայմանները	Ինդեքս	4.4	4.2	4.5	4.5	4.6
	Հորիզոնական	74	100	56	66	40
Ենթակառուցվածքներ	Ինդեքս	3.2	2.8	4.4	3.2	3.5
	Հորիզոնական	81	94	38	79	66
Բնական և մշակութային ռեսուրսներ	Ինդեքս	2.0	2.6	3.3	2.0	2.0
	Հորիզոնական	103	57	27	96	106

Եթե փորձենք համեմատել ՀՀ-ի և հարևան երկրների ցուցանիշներն ըստ ենթաինդեքսների, կտեսնենք, որ ՀՀ-ն «Արդյունավետ միջավայրի ստեղծում» ենթաինդեքսով հարևան երկրներից զիջում է Վրաստանին (5.4 միավոր) և Ադրբեջանին (5.4 միավոր), որոնք համապատասխանաբար զբաղեցնում են 40-րդ և 37-րդ հորիզոնականները: «Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականություններ և նպաստավոր պայմաններ» ենթաինդքսով ՀՀ-ն զբաղեցնում է 74-րդ հորիզոնականը՝ 4.4 միավորով, և այս ցուցանիշով գերազանցում է միայն Իրանին, որը 4.2 միավորով զբաղեցնում է 100-րդ հորիզոնականը: Նույն պատկերն է նաև «Ենթակառուցվածքներ» ենթաինդեքսով, սակայն այստեղ ՀՀ-ն զբաղեցնում է ավելի ցածր՝ 81-րդ հորիզոնականը՝ 3.2 միավորով, իսկ Իրանը՝ որպես տարածաշրջանի հարևան երկրների հետնապահ, այս ենթաինդեքսով 94-րդն է՝ 2.8 միավորով: «Բնական և մշակութային ռեսուրսներ» ենթաինդեքսով ՀՀ-ն 103-րդ հորիզոնականում է՝ 2.0 միավորով և առաջ է անցել միայն Վրաստանին, որը 2.0 միավորով 106-րդն է:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*